

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲԱՌԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՄԻ ՋԵՌԱԳԻՐ

ՎՐԵԺ ՆԵՐՍԻՍՅԱՆ (ԼՈՆԴՈՆ)

Բրիտանական գրադարանի (նախկին Բրիտանական թանգարան) հայկական ձեռագրերի հավաքածուի առաջին մանրամասն նկարագրությունը պատրաստել և հրատարակել է անգլիացի հայագետ Ֆ. Ս. Կոնիբերը 1913 թ. Այդ հրատարակությունից հետո գրադարանը ձեռք է բերել 40 ւրժեքավոր ձեռագրեր (12-ը՝ մեծ գրադարանավարության ժամանակամիջոցին)։ Այս և Մեծ Բրիտանիայի գիտական մի շարք այլ հաստատություններում պահվող և ցարդ չնկարագրված հայերեն ձեռագրերի թիվը հասնում է շուրջ 200-ի, որոնց ցուցակագրումը ընթացքի մեջ է՝ 1984 թ. հրապարակելու ծրագրով։

1922 թ. Բրիտանական թանգարանի գրադարանը «Լուզակ և ընկերություն» գրախանութից ձեռք է բերել մի շարք հայերեն ձեռագրեր, որոնք պատկանում էին արաբագետ, թանգարանի գիտաշխատող, դոկտոր Ի. Ջ. Էլիսին (E. G. Elis)։ Այս ձեռագրերից մեկի (ՕՐ. 9136) բովանդակությունն է, որ դանկանում ենք ներկայացնել այս գրությամբ։

Հայ միջնադարյան մատենագրությունն ունի բառարանագրական հարուստ ժառանգություն։ Գիտական աշխարհը առաջին անգամ հանգամանորեն ծանոթացավ հայ բառարանագրական հուշարձաններին Հ. Մ. Ամալյանի «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները» (V—XV դդ., Երևան, 1966 և XVI—XVII դդ., Երևան, 1971) աղժեքավոր աշխատության շնորհիվ։ Այս աշխատության մեջ արժարժվում են հայ միջնադարյան բառարանագրության սկզբնավորման, զարգացման, տեսություն ու բնութի հիմնական հարցերը՝ V—XVII դդ. բառարանագրական ձեռագրերի ուսումնասիրությամբ։ Տպագիր հայերեն և հայերենին առնչված բառարանների պատմությունը վերլուծված և արժեքավորված է Գ. Կ. Գասպարյանի «Հայ բառարանագրության պատմություն» (Երևան, 1968) շահեկան մենագրության մեջ։ Օգտվելով վերը հիշված ալմ էրկու աշխատություններից, հայ լեզվաբաններին ներկայացնում ենք մի նորահայտ «Բառարանագրական ժողովածուի» շատ հարուստ նյութերը։

ԱՐՏԱՔՈՆ ՆԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

4. Պոլիս

XVI—XVII դարեր

Կրիչ՝ անհայտ։ Ստացող՝ Մեսրոբ վարդապետ։ Թերթ՝ 325։ Նույր՝ թուղթ։ Մեծություն՝ 19,5×15 մմ։ Գրություն՝ երկայուն։ Գիր՝ բոլորգիր։ Տող՝ 22։ Մանրանկարչություն՝ չունի։ Հիշատակարան՝ չունի։ Կազմ՝ կանաչ գույնի նոր լաթակալով։ Վիճակ՝ լավ։

Մանր. Ձեռագրի էջ 160բ և 213բ երեսների երեք կնիքների գրության համաձայն ձեռագիրը մի ժամանակ սեփականությունն է եղել Յիսուս Քրիստոսի ի ծ[ա]ռ[ա]յ Մեսրոբ վարդապետի ՌՃ...

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

1. [Լուծումն բառից Յաստուածաշունչ Գրոց]
[Հին 4 տ ա կ ա ր ա ն]
էջ 1—131

1—3բ [Բառք ի գրոց Ծննդոց]
3բ—11բ Բառք ի գրոց Եկիցն

11բ—17ա	Բառք ի գրոց Ղևտացուց
17ա—22բ	Բառք ի գրոց Թուոց
22բ—27բ	Բառք երկրորդ Օրինաց
27բ—29բ	Բառք ի գրոց Յեսուայ որդոյ Նաւեայ
29բ—32բ	Բառք ի գրոց Դատաւորաց
32բ	Հռութ
32բ—36բ	Բառք ի գրոց Թագաւորութեանց Առաջին
36բ—39բ	» » » » երկրորդ
39բ—43ա	» » » » երրորդ
43ա—46բ	Բառք ի գրոց Չորրորդ Թագաւորութեանց
46բ—47բ	Բառք ի գրոց Մնացորդաց Առաջին
47բ—49ա	Բառք ի գրոց Մնացորդաց Երկրորդ գլխոյն
49ա—50ա	Բառք ի գրոց Եղբի Առաջին
50ա	Բառք ի գրոց Եղբի երկրորդ գլխոյն
50բ—51ա	Նէեմի Միսթարութիւն
51ա—52ա	Բառք ի գրոց Եսթերայ
52ա—53ա	Բառք ի գրոց Յուդիթայ
53ա—54ա	Բառք ի գրոց Տովբիթայ
54ա—58ա	Բառք ի գրոց Մակաբայացոց Առաջին
58ա—63ա	» » » » երկրորդ
63ա—65ա	» » » » երրորդ
65ա—71ա	Բառք ի Սաղմոսաց մարգարէին Դաւթի
71ա—76բ	Բառք ի գրոց Առակացն Սողոմոնի
76բ—77բ	Բառք ի գրոց ունայնութեանց Սողոմոնի
77բ—80ա	Բառք երգոցն երգոյն Սողոմոնի
80ա—83բ	Բառք ի գրոց Իմաստութեան Սողոմոնի
83բ—87բ	Բառք ի գրոց Նահապետին Յոբայ
87բ—88բ	Բառք էլիսայ
88բ—89բ	Տեառն խօսելն ընդ Յոբայ
89բ—101բ	Բառք ի գրոց մարգարէին Եսայեա
101բ—103ա	Բառք ի գրոց երկուստեան մարգարէիցն: Յովսիայ
103ա—104բ	Ամովս
104ա—բ	Միքիայ
104բ—105բ	Յովել
105բ	Աբիդիու
105բ	Յովնան
106ա—բ	Նաւում
106բ—107բ	Ամբակում
107բ	Սոփոնիայ
107բ—108ա	Անգէաս
108ա—109ա	Զաքարիայ
109ա—բ	Մաղաքիայ
109բ—116բ	Բառք ի գրոց մարգարէին Երեմիայի
117ա—բ	Բարուք
117բ—118ա	Երեմիայ Ողբոցն
118ա—121ա	Բառք ի գրոց մարգարէին Դանիէլի
121ա—129ա	Բառք ի գրոց Եզեկիէլի
129ա—131ա	Բառք ի գրոց Սիրաքա

[Ն ո Ր Կ տ ա կ ա ր ա ն]

էջ 131ա.—157բ

131ա—136ա	Բառք Աւետարանչին Մաթէոս
136ա—138ա	» » » Մարկոսի
138ա—141բ	Բառք Ղուկասու գլխոյն
141բ—143ա	Բառք Յովհաննու
143ա—146ա	Բառք ի գրոց Գործոց Առաքելոց
146ա—բ	Բառք ի Կաթողիկէաց: Թղթոյն Յակոբայ
146բ—147բ	Պետրոսի Առաջին թղթոյն
147բ—148ա	Երկրորդ գլխոյն Պետրոսի
148ա	Յովհաննու թղթոյն
148ա—բ	Թղթոյն Յուդայի
148բ—150ա	Բառք ի գրոց Առաքելոյն Պողոսի
150ա—152ա	Բառք Կորնթացոց Առաջին
152ա—բ	Գաղատացւոց գլխոյն
152բ—153ա	Եփեսացւոց գլխոյն
153ա—բ	Փիլիպեցւոց գլխոյն
153բ	Լոդոնացւոց գլխոյն
153բ—154ա	Առաջին Թեսաղոնիկեցւոց թղթոյն
154ա	Երկրորդ գլխոյն [Թեսաղոնիկեցւոց]
154ա—155ա	Եբրայեցւոց գլխոյն
155ա—բ	Տիմոթէոսի Առաջին
155բ—156ա	[Տիմոթէոսի] Երկրորդ գլխոյն
156ա	Տիտոսի թղթոյն
156ա	Փիլիմոն
156ա—157բ	Բառք Տեսլեանն Յոհաննու
157բ	Բառք էր ընդ Եղբօրն:

Յանսը. Այս բառացանկը խորագիր չունի, որովհետև ձեռագիրը սկզբից պակասավոր է. և առաջին ամբողջական բառացանկի ենթախորագիրն է «Բառք ի գրոց Ելիցն»: Համաձայն Հ. Մ. Ասալյանի դասակարգման, XVII դարի հայ մատենագրության մեջ կա Ս. Գրոց երեք տեսակի բացատրական և մեկ Հատուկ անունների բառարան: Սրանք են. ա. Բառք Սուրբ Գրոց, բ. Լուծումն բառից Յաստուածաշունչ գրոց, գ. Այս Բառք Յաստուածաշունչ գրոց, դ. Մեկնութիւն Անուանց Երրայեցւոց: Այս ձեռագրի բովանդակութեան ցանկից և մի շարք բնագրային աւանդանաւորութիւններից երևում է, որ Ս. Գրոց այս բառարանը երևմիա Մեղրեցու «Լուծումն Բառից Յաստուածաշունչ Գրոց» հեղինակային գործն է: Այս ձեռագրի մեջ Հորի գրքի երկու բառացանկերի («Բառք ի գրոց Նահապետին Յորայ» և «Տեստն Խօսելն ընդ Յորայ») միջև ընկած են «Բառք էլիոսայ», իսկ մարգարեներից հետո՝ «Բառք ի գրոց Սիրաբա» բառացանկերը: Նոր Կտակարանի գրքերից բառացանկեր չունեն Հովհաննու երկրորդ և երրորդ, Պողոսի Հռոմայեցիս, Կորնթացիս երկրորդ թղթերը: Ձեռագրի վերջին բառացանկի խորագիրն է՝ «Բառք էր ընդ Եղբօրն»: Այս ձեռագրի արժանիքները ըստ արժանւոյն բացահայտելու համար բերում ենք մի հատված բառացանկից.

«Բառք ի գրոց առաքելոյն Պողոսի»

էջ 148բ

Պողոս.	Եբրայեցերէն թարգմանի բերան փողոյ կամ ընտրեալ զարմանալի. յունարէն՝ հանդարտ. լատիներէն՝ փոքր:
Շնորհք.	ողջոյն կամ խաղաղութիւն:
Երբէք.	Երբեմն. կամ երբ. կամ ժամանակ մի. կամ անգամ մի. կամ յորժամ:
Անձկալ.	ցանկալ. կամ ըղձալ, կամ փափագել. կամ տարփալ կամ տենչալ:

Շնորհ. ձիր. կամ պարգև
Անն. արդակ. կամ հարթ...

Հմմտ. Հ. Մ. Ամալյան. ՄՀԲՀ (XVI—XVII դդ.), էջ 92—93:

2. [Հին Կտակարանի գրեթե զանազան լեզուներով բնագրերի և նվաճումների]
էջ 159ա—բ

Սկ. Առաջինն անուանեն Բերեսիթ. զոր մեք Արարածոց կոչեմք:
Երկրորդն. Եզեուսիթ. որ է Ելիցն:
Վերջ. Ե (5) Մովսէսին, Ը (3) մարգարէք: Սրբագրացն թ (9) որ լինի իմ
(22):

Ծանոթ. Ցանկը տալիս է Հին Կտակարանի եբրայերեն կանոնի զրքերի շարքը՝ բաժանված
երեք մասերի: Գրքերի անունները բերված են եբրայերեն լեզվով, որոնց դիմաց տրված
է նրանց հայերեն անվանումները:

3. «Այս բառք յեռաքիսական բաղաձայնք համանունաց բաղաձայնեալ
գոմնայն որ ինչ միանգամեն անուանի յերբայեցի. յօրէնս և ի մարգարէս և
ի նոր Կտակարանս. բարգմանեալ և մեկնեալ յերբայեցոց ի յոյնս և ի շումէ:
ի հայ կարգաւ րստ նշանագրացն. և գմեկնութիւն նշանագրացն աղբարբիցն,
թէ զինչ մեկնութիւն անուանցն ունիցին»

էջ 159ա—160ա

Սկ. Ալիք. Ուսումն նշանագրաց:
Բէթ. Բնակեալ ի գիմին
Գամիղ. լրումն վեհագոյն կամ ծնունդ
Վերջ. Թաւ. նշան կամ կոշումն

Ծանոթ. Շատ ձեռագրերում այս սլոգաններն հաջորդում է «Բառք եբրայեցոց» բառարանը:
Այս ձեռագրում եբրայական տառերի անվանումները անջատված է բուն բառարանից և հանդես
է գալիս որպէս ինքնուրույն ցանկ:

Հմմտ. Հ. Մ. Ամալյան. ՄՀԲՀ (V—XV դդ.), էջ 143—147:

4. [Բառգիրք Հայոց]
էջ 160բ—279բ

«Այս են բառք քերթողական վասն Հոմերական տառիցն: Բայց ղյունա-
կան և ղերբայադոցն խառնեցաք ի մի. նաև ղաստուածաշնչին բառք ևս»:

Սկ. Աբանայ — Արհնութիւն
Աբաուլթ — անշէն
Աբարիմ — անցք կամ անցանօք
Վերջ. Օտարափառ — ալլափառ. կամ ալլաղանդ
Օրէնք — կարք կամ դրոնք
Օրինակ — գրէթէ կամ համարեալ թէ
Օրիորդ — կոյս կամ հարսնածոք
Օրհնել — յալսանել կամ կատարել
Օգտել և Օծ — պատառել կամ որոշել
տել

Ծանոթ. Բառարանի պատմությունը տես Հ. Մ. Ամալյան. ՄՀԲՀ (XVI—XVII դդ.), էջ
186—242 և «Բառգիրք Հայոց: Քննական բնագիրք, առաջաբանը և ծանոթ.» Հ. Մ. Ամալյանի
ձեռքան, 1975):

5. «Բառք Գալիանոսի բժշկի»

էջ 279բ—284բ

Սկ.	Ախթար.	վաղամեռուկ
	Աթենոյ.	ւամիթ
Վերջ.	Աթրակս.	խաւարտ
	Քոնտոս.	խաղճախուղճ
	Քորսոր.	սպերման
	Քւմիդոն.	կանկար

Մանսր. Հմմտ. Հ. Մ. Ամսլան. ՄՀԲՀ (V—XV դդ.), էջ 179—196:

6. «Թարգմանութիւն դեղոց զոր բնութեալ են իմաստունքն
և գրեալ ի մեր լեզուս»

էջ 284բ—288ա

Սկ.	Աբճուլ	—ցրթնիպտուղ
	Ախթար	—վաղամեղուկ
	Աղատ-	
Վերջ.	դրախտ	—ջանտարի
	Քունտայշն	—դմահ
	Քըշոտ	—դաղճն
	Քրասիոն	—մեղրածրծուկ

Մանսր. Հմմտ. Հ. Մ. Ամսլան. ՄՀԲՀ (V—XV դդ.), էջ 200—203:

7. «Թարգմանութիւն Պարսից բառից ի Վարդան գրոց»

էջ 288ա—բ

Հնթերդողին ենք ներկայացնում այս բառացանկը ամբողջութեամբ.

Ջրադաշական	—բունբան կամ զկարեաց ուխտ
Ամբարտքաշ	—ջահակրօն. կամ լուսամիտ
Բազպայիտ	—մեղաց քաւարան
Դէնեմազդէ	—հաւատով հաւատ
Դեհապէտ	—գլխաւոր
Դերան. դերձապետ	—բառաշ. կամ սալահ արտր
Երան և տարերան	—մեծարգոյ և պատուական
Ջանդիք	—սպասաւոր
Ջրուան	—կրօնոս. կամ արամազդ
Գօմէզ	—օշնան. կամ շօղուն
Հնդկրունկ	—յետս դարձեալ
Լակիշ	—համապունդ
Համակդէն	—ամենահաւատ
մարդն	—հարկն կամ հասն
Մովպետան մովպետ	—իշխանաց իշխան
նաժրացիք	—աղատացիք
նախճիր	—ոճիր. կամ արեան ճապաղի
Յաշտառեր	—ներգործեր. կամ ստեղծագործեր
Պալհաիկն և պարս-	
կադէնն	—երկուց մեծամեծ ըզգիտութիւն ունին
Սպայիդ	—հեծելիդ. կամ զօրացդ
Սեպուհ	—հարկաւոր. կամ մեծարգոյ
Վատախտակ	—ի քիմի կացեալ
Սաղաւարտ	—ստրատելատ
Սկօթակ	—սարաշխարհիկ. կամ վտարանդի
Փանդամն	—կողպատերեսաց. կամ վասն իրցլեացն
Փանդուրակայորդի	—հիւսանորդի
Փոստիպան	—մարմնապահ ուր են կանաչք քրմացն

Քրեմորմզդ
Ուրունաց

— անդրանիկ կամ հարագատ
— չէ պարսից. բայց պըսակ ասի

Զոռաշին ճառն. երիս բառ պարթևն ոչ գիտաց. ասելով թէ չէ պարսից և ասլն ասլ է:

Մանր. Հմմտ. Դ. Գ աս պ ա լ յ ա ն. «Վարդանանց Պատմության միջնագրյան բառարանը. — «Պատմա-բանասիրական հանդես, 1963, № 2, էջ 269—275: Հ. Մ. Ա մ ա լ յ ա ն. ՄՀԲՀ (V—XV դդ.), էջ 101—106:

8. «Հանդէս բանաստեղծաց, փաղանունաբար ստորոգիլ սակս նորավարժիցն. բառ գեոլոկ»
էջ 288ր—298բ

Սկ. ...աղան, աստուածասքանչ, աստուածադեաց, աստուածասէր, աստուածավայելուչ, քրիստոսափառողակ, արդարակ, քանովն, դոյզ, կշիռ հաւասար, հանդոյն, հանգէտ, լծակից:

Վերջ. հակառակել. ալլայել, զանաղանել, հոլովել, յեղանակել, դրդուել, վհատել, երերել, խարխալել:

Մանր. Հմմտ. Բրիտանական գրադարանի ձեռ. օր. 5273, էջ 322բ—341ա՝ «Բնունքն սըտ վարժ» (sic) [Սկ.] անհաս. անճառ. անպատում... [վերջ] թափանցանց. մարգարէ. անսանող: Տէս նաև Հ. Մ. Ա մ ա լ յ ա ն. ՄՀԲՀ (V—XV դդ.), էջ 123—132:

9. «Աշխարհացոյց Մսէսայ»
էջ 299ա—325բ և 158ա—բ

Յաղագս աշխարհագրութեան աստուածային գիրս ոչ ուրեք գտանիմք ուղի ասացեալ, այլ դոյզն ինչ դուն ուրէք. և այն դժուարահաս և տաժանելի: Արդ վասնդի անհաս դոցա եղեալ մեզ յարաբրինսն հարկաւորիմք ձեռնաբերել:

[ՆԵՔԱՆՈՐԱԳՐԵՐ]

1. Աշխարհագիր հատուած երկրորդ: Քանդի գլունականան... (302ա)
2. Աստանօր աշխարհ Եւրօպիոյ: Սպանիա՝ է երեք անկիւնի... (305ա)
3. Աշխարհ ընդհանուր Ասիացոց: Զոռաշին բաժին երկրի... (309ա)
4. Ահա նատարեցան Միջերկրայն կոչեցեալք: Մարամատացոց... (312ա)
5. Այժմ կամիմ զսոսա մանրամասնաբար սլատմել թէ սակաւ ինչ աշխատիցիմ ի գիր և ի քարտէս: Առգունի բարձր հայք դաւառս ինն... (314բ)
6. Ահա կատարեցան ամենայն Հայք: Ասորիք յելից... (317ա)
7. Անուանք քաղաքացն Հնդկաց և Պարսից: Պանիան քաղաքն... (323ա)
8. Զորս գետքն են: Փիտոն ի Հնդկաց... (158ա)
9. Գետք և գնացք նոցա մեծ և անուանիք քառասուն և երկու: Նաբանայ և փարփայ... (158բ)

Մանր. Ձեռագիրը վերակազմելիս թ. 158-ը սխալ տեղ է դրվել: Այն շարունակությունն է թ. 325-ի: Ձեռագրի վերջին խորագրի բովանդակության առաջին մասը համապատասխանում է Բրիտ. գրադ. օր. 5459, 31բ—33ա էջերի բովանդակության: Ձեռագիրը վերջից թերի է:

ЦЕННАЯ ЛЕКСИКОГРАФИЧЕСКАЯ РУКОПИСЬ БРИТАНСКОЙ БИБЛИОТЕКИ

ВРЕЖ НЕРСИСЯН (Лондон)

(Резюме)

Первое описание армянских рукописей Британской библиотеки подготовил и издал английский арменовед Ф. С. Конибер в 1913 г. Впоследствии библиотека приобрела новые рукописи. Содержанию одной из неописанных рукописей (ог. 9136) посвящена настоящая статья.

6 «Հանդես», № 4